ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 1, 2016 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում տրված է Արարատյան բնատնտեսական շրջանի գյուղական տարածքների, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման ձևավորման և զարգացման նախադրյալների վերլուծությունը: Քննարկվել են գյուղական տարածքների տարածաշրջանային տարբերությունները և առանձնահատկությունները: Տրվել է բնատնտեսական շրջանում 1926–2015 թթ. ընթացքում գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը: Մատնանշվել են բնատնտեսական շրջանի գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական ժամանակակից հիմնախնդիրները:

***Keywords*:** pural terrain, rural settlements, rural resettlement mountain regions, territorial resources.

Երկրների և շրջանների ամբողջ բնակելի տարածքն ընկած՝ քաղաքային բնակավայրերից դուրս, իր բնական և մարդու կողմից վերափոխված լանդշաֆտներով, բնակչությամբ և բնակավայրերով (գյուղական բնակավայրերի կատեգորիա) անվանվում են գյուղական տարածքներ [1]: Դրանց գլխավոր տարրերը գյուղական բնակավայրերն են, որոնց ամբողջությունը (ցանցը) և միջբնակավայրային կապերի ընդհանրությունն որոշակի տարածքում առաջացնում է գյուղական տարաբնակեցում: Վերջինս հանդիսանում է տարաբնակեցման միասնական համակարգի գլխավոր օղակներից մեկը:

Լեռնային մակերևույթի բարդ կառուցվածքի և բնաաշխարհագրական պայմանների բազմազանության հետևանքով ՀՀ-ում հստակորեն առանձնանում են որոշակի բնատնտեսական ներքին տարբերություններ: Բնատնտեսական յուրաքանչյուր միավոր առանձանում է պատմաազգագրական, բնական համալիրի, տնտեսության զարգացման և մասնագիտացման ինքնատիպ գծերով, որոնք պայմանավորում են նաև առանձին բնատնտեսական միավորների բնակեցման և տարաբնակեցման բնույթը: Որպես կանոն, բնատնտեսական միավորներն իրենց տարածքի սահմաններում ունենալով տարաբնակեցման լավ արտահայտված գծեր, միմյանցից տարբերվում են հենց բնակչության տարածքային կազմակերպման առանձնահատկություններով: Չնայած որ վերջին տասնամյակներին այդ տարբերություններն ինչ որ չափով համահարթվել են, այնուամենայնիվ բնատնտեսական միավորները պահպանում են

* E-mail: aksel.potosyan@yandex.ru

տարաբնակեցման իրենց բնորոշ գծերը և ինքնատիպ առանձնահատկությունները: ՀՀ մարզերից Շիրակը, Լոռին, Տավուշը, Գեղարքունիքը, Վայոց ձորը և Սյունիքն իրենց տարածքով հիմնականում համապատասխանում են Շիրակ, Գուգարք, Ուտիք, Սևան, Վայք և Զանգեզուր բնատնտեսական շրջաններին, իսկ Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի տարածքները միասին վերցրած մասնակի շեղումներով՝ Արարատյան բնատնտեսական շրջանին:

Արարատյան բնատնտեսական շրջանը զբաղեցնում է ՀՀ տարածքի մոտ 27%-ը: Այստեղ են գտնվում հանրապետության 37 տարածաշրջաններից 13-ը: Ուղղաձիգ բարձրությունների մեծ տատանումների հետևանքով (800–4090 *մ*) այն բնութագրվում է բնաաշխարհագրական պայմանների արտակարգ բազմազանությամբ:

Բարձրաչափական առումով Արարատյան շրջանն ունի ամենանպաստավոր պայմանները տարաբնակեցման համար: Եթե մինչև 1000 *մ* բարձրություն ունեցող տարածքները ՀՀ-ում զբաղեցնում են մոտ 10%-ը [2], ապա այստեղ դրանք մոտ երկու անգամ ավելի են՝ 19,6%: Շրջանի ընդհանուր տարածքի մեջ ՀՀ միջին ցուցանիշի (18,3%) համեմատությամբ գրեթե 7 կետով ավելի է նաև 1000–1500 *մ* բարձրության գոտու մասնաբաժինը: Բնատնտեսական շրջանի տարածքի 44,8%-ը բարձրաչափական առումով ունի առավել նպաստավոր պայմաններ բնակավայրերի ձևավորման և զարգացման համար: Տափարակ և մեղմաթեք հարթությունները (մինչև 3°) և մեղմաթեք լանջերը (3–8°), որոնք ՀՀ-ում զբաղեցնում են 44,6% [2], իսկ Արարատի շրջանում՝ 63,8%, նույնպես ունեն *առավել նպաստավոր* պայմաններ տարաբնակեցման ձևավորման և զարգացման համար: Բնակեցման և տնտեսական գործունեության համար *բարենպաստ պայմաններ* ունեցող տարածքները (1500–2000 *մ* բարձրությունները) կազմում են Արարատի 22,5%-ը, իսկ մասամբ պիտանի՝ 2500-ից բարձր ընկած տարածքները՝ 14,9%-ը [2]:

Տարաբնակեցման համար պակաս նպաստավոր չեն նաև շրջանի կլիմայական պայմանները: Տիրապետողը չոր ցամաքային կլիմայի տիպն է, որն արհեստական ոռոգման դեպքում բարենպաստ հնարավորություններ է ստեղծում ինտենսիվ երկրագործության զարգացման համար: Արարատյան շրջանը ՀՀ-ի ամենաընդարձակ այգեստանն է, այստեղ է կենտրոնացված մեր երկրի գյուղատնտեսական հողատարածքների 30 և վարելահողերի մոտ 8%-ը:

ՀՀ մյուս մարզերի համեմատությամբ Արարատյան շրջանի տարածքում ընկած մարզերն առաջ են անցել արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալով, արտադրողական ուժերի քիչ թե շատ համալիրային զարգացմամբ, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների տարրերի ապահովվածությամբ: Սրանց 2014թ. բաժին էր ընկնում ՀՀ արդյունաբերական արտադրանքի 29,7 և գյուղատնտեսական արտադրանքի՝ 47,6%-ը (աղյ. 1):

Արարատյան շրջանի գյուղական տարածքների և բնակավայրերի զարգացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև մայրաքաղաք Երևանը, որտեղ կենտրոնացված է ՀՀ բնակչության 34,3%-ը, սակայն տալիս է ՀՀ արդյունաբերական արտադրանքի 42%-ից ավելին (աղյ. 1):

Շրջանի գյուղական բնակավայրերի համար առանձնահատուկ դեր ունեն նաև Երևանից սկսվող միջպետական և հանրապետության համար առանցքային նշանակություն ունեցող ավտոճանապարհները, երկաթուղագծերը, միջմարզային և միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող

ավտոճանապարհները, ինչպես նաև Արմավիրի, Արտաշատի, Թալինի, Ստորին Հրազդանի, Արզնիի Ծամիրամի, Կոտայքի, Աշտարակի, Էջմիածնի, Երասխավանի (Արազդայանի) մայր ջրանցքները և դրանցից սկզբնավորվող հսկայական ոռոգիչ ցանցը:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի տնտեսության հիմնական հատվածների մասնաբաժինը ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում (2014թ.) [3]

Մարզեր և բնատնտեսական շրջան	Արդյունաբերական արտադրանքի բաժինը ՀՀ-ում, %	Գյուղատնտեսական արտադրանքի բաժինը ՀՀ-ում, %	Շինարարության բաժինը ՀՀ-ում, %	Մանրածախ առևտրի բաժինը ՀՀ-ում, %	Ծառայությունների բաժինը ՀՀ-ում, %
Արմավիր	4,2	17,5	1,9	2,2	1,6
Արարատ	10,2	14,2	3,5	2,0	1,5
Արագածոտն	2,3	9,9	2,9	1,2	0,8
Կոտայք	13,0	6,0	4,8	2,9	3,7
Ընդամենը Արարատյան շրջանում	**29,7**	**47,6**	**13,1**	**8,3**	**7,6**
Ծիրակ	3,8	11,0	2,5	2,5	2,0
Լոռի	5,4	7,4	14,8	1,5	1,4
Սյունիք	15,3	7,1	3,5	1,9	1,3
Գեղարքունիք	1,8	19,0	2,5	1,5	0,9
Վայոց ձոր	1,2	2,2	3,0	0.3	0,6
Տավուշ	0,7	4,6	6,7	1,4	0,7
Երևան	42,1	1,1	53,9	82,6	85,5
Ընդամենը ՀՀ-ում	**100**	**100**	**100**	**100**	**100**

Բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և ենթակառուցվածքային գործոնների բերված վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ Արարատյան բնատնտեսական շրջանի մեջ մտնող մարզերը ՀՀ-ում առանձնանում են գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առավել նպաստավոր և բարենպաստ պայմաններով, որի շնորհիվ ՀՀ տարածքի ընդամենը 27,5% զբաղեցնող այս տարածքներում կենտրոնացված է ՀՀ գյուղական բնակչության ավելի քան 60 և մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 40,0%-ը:

Արարատյան շրջանի գյուղական բնակչության խտությունը (82 մարդ/*կմ*^{2}) մոտ 2 անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշը, իսկ Արարատի և Արմավիրի մարզերում՝ 2,3 և 3,6 անգամ:

Արարատը գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակով շատ քիչ է զիջում ՀՀ-ում առաջինը համարվող Գեղարքունիքին և 1,4 անգամ գերազանցում է ՀՀ-ի միջին ցուցանիշը: Բացի Արագածոտնից, որտեղ շատ են բարձր լեռնային, փոքր և միջին գյուղերը, մյուս երեք մարզերում գյուղերի միջին մարդաքանակի ցուցանիշն անցնում է 2000 մարդուց, մասնավորապես Արարատի և Արմավիրի մարզերում այդ ցուցանիշն անցնում է 2200-ից [4]:

Ելնելով բնատնտեսական շրջանի ներքին տարածքային տարբերություններից կարելի է առանձնացնել երեք ենթաշրջաններ. Արարատյան դաշտ, նախալեռներ և լեռնային գոտի, որոնք միմյանցից տարբերվում են բնական և

տնտեսական պայմաններով, գյուղական տարածքների և տարաբնակեցման առանձնահատկություններով:

Գյուղատնտեսության զարգացման համեմատաբար բարձր մակարդակը, հողատարածքների քիչ թե շատ մեծ չափերը և մշակաբույսերի աշխատատարությունը պայմանավորել են *Արարատյան դաշտի* գյուղական բնակավայրերի մեջ մեծ և խոշոր գյուղերի գերակշռությունը: Այստեղ գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնությունը գտնվում է 800–900 *մ* բացարձակ բարձրության վրա և համատարած շերտով ձգվում են գլխավոր ջրանցքների և ճանապարհների երկայնությամբ: Շատ բնակավայրեր ձուլվում են իրար և դրանց միջև եղած միջին հեռավորությունը չի անցնում 3–4 *կմ*-ից: Ձևավորվել է գյուղական բնակավայրերի կայուն և միասնական համակարգ, որտեղ հենակետային դեր են կատարում Վաղարշապատ, Արմավիր, Արարատ, Արտաշատ և Մասիս քաղաքները, ինչպես նաև մայրաքաղաք Երևանը:

Աղյուսակ 2

Արարատյան շրջանի մարզերի գյուղական բնակավայրերի բաշխումն՝ ըստ մարդաքանակի (2015 թ.) [3]

Մարզեր	Գյուղերի բաշխումն ըստ մարդաքանակի													
	200>		201–500		501–1000		1001–3000		3001–5000		>5000		**ընդամենը**	
	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	**1**	**2**
Արագածոտն	17	1991*	22	7264	37	25243	28	44898	8	31324	2	12260	**114**	**122980**
Արարատ	1	155	4	889	13	9878	57	110266	13	47291	6	40298	**94**	**208777**
Արմավիր	2	327	3	1010	6	4158	62	116828	19	69064	3	19516	**95**	**210903**
Կոտայք	3	302	6	2141	13	9187	28	54476	5	18312	7	42429	**62**	**126847**
Ընդամենը	**23**	**2775**	**35**	**11304**	**69**	**48466**	**175**	**326468**	**45**	**165991**	**18**	**114503**	**365**	**669507**

Ծանոթություն՝ 1 – գյուղերի թիվը; 2 – բնակչության թիվը:

Արարատյան դաշտի գյուղական բնակավայրերը ձևավորվել և զարգացել են միասնական տնտեսական բազայի հիման վրա և գյուղերի ճնշող մեծամասնությունն ունեն գրեթե միանման գործառույթային կառուցվածք (խաղողագործական-այգեգործական տնտեսություններն են դաշտավարության և անասնապահության ճյուղերի զուգակցումով): Որոշ խոշոր գյուղերում կան արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր և գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրություններ:

Տարածքի բնակեցվածության աստիճանով, գյուղական բնակչության և բնակավայրերի թվով Արարատյան դաշտին հաջորդում է *նախալեռնային գոտին* (1000–1500 *մ*): Այս գոտում բնակեցված հիմնական տարածքն ընդգրկում է Եղվարդի, Արագածոտնի, Կոտայքի և Շամիրամի սարահարթերը և մասամբ նաև Գեղամա զանգվածի արևմտյան լանջերը:

Ի տարբերություն Արարատյան դաշտի, բնակեցումն այստեղ համատարած չէ՝ մակերևույթի կտրատվածության և բլրապատվածության պատճառներով, սակայն գյուղական բնակչության խտությամբ և բնակավայրերի մարդաշատությամբ այս գոտին գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշները: Դա բացատրվում է գյուղատնտեսության աշխատատար և եկամտաբեր ճյուղերի (այգեգործություն, խաղողագործություն, անասնապահություն) զարգացումով և տնտեսաշխարհագրական նպաստավոր դիրքով: Այս գոտում են ընկած Աշտարակի, Կոտայքի և Նաիրիի տարածաշրջանների գյուղերի մոտ 73%-ը, որոնց բաժին է ընկնում նշված տարածաշրջաններ-

ի գյուղական բնակչության շուրջ 90%-ը: Միջին մարդաշատության ցուցանիշը դրանցում հասնում է 2350 մարդու, որը մեծ է նույնիսկ Արարատյան դաշտի համապատասխան ցուցանիշից: Տարածված է բնակեցման սարահարթաբլրային ցրված տիպը: Բնակավայրերի միջև միջին հեռավորությունը մեծ չէ (4–5 *կմ*), որոնք շղթայաձև տարածված են Թալին–Աշտարակ խճուղու երկայնքով և շառավղային-շրջանաձև տարածում ունեն Աշտարակ, Աբովյան և Եղվարդ քաղաքների նկատմամբ՝ առավելագույնը 15–20 *կմ* հեռավորությամբ: Այս գոտու առանձին հատվածներ (Արագածոտնի սարահարթի հարավարևմտյան մասը և Ազատ և Վեդի գետերի միջագետքը) ընդհանրապես բնակեցված չեն:

Աղյուսակ 3

Արարատյան շրջանի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի բաշխումն ըստ բարձրության գոտիների (2015 թ.) [3]

Մարզեր	Բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների, *մ*																	
	801–1000		1001–1200		1201–1400		1401–1600		1601–1800		1801–2000		2001–2200		>2201		**ընդամենը**	
	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	**1**	**2**
Արագածոտն	2	2125	14	32180	10	20828	17	14362	16	12030	27	21607	27	182522	1	1326	**114**	**122980**
Արարատ	83	199320	3	5471	2	1181	–	–	4	1693	3	11111	–	–	–	–	**94**	**208777**
Արմավիր	89	202425	5	7837	1	641	–	–	–	–	–	–	–	–	–	–	**95**	**210903**
Կոտայք	–	–	5	19873	12	41690	21	37669	16	22293	5	4588	3	734	–	–	**62**	**126847**
Ընդամենը	**174**	**403870**	**27**	**65361**	**25**	**64340**	**38**	**52031**	**35**	**36017**	**35**	**27306**	**30**	**19256**	**1**	**1326**	**365**	**669507**

Արարատյան շրջանի *լեռնային գոտին* (1500 *մ*-ից բարձր) ընդգրկում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածների, Ծաղկունյաց և Ուրծի լեռնաշղթաների բարձրադիր լանջերը: Այս գոտին զբաղեցրած տարածքով և բնակավայրերի թվով գերազանցում է նախորդին, սակայն բնակչության թվով մոտ 2 անգամ զիջում է նրան: Բնակավայրերի տարածման վերին սահմանը մինչև 2200 *մ* բարձրությունն է, որից բարձր կա ընդամենը 1 գյուղ:

Արարատյան շրջանն առանձնանում է նաև անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակչության տեղաբաշխման և մարդաքանակի փոփոխություններով: Եթե ՀՀ գյուղական բնակավայրերի ընդհանուր թվաքանակում Արարատյան շրջանի մասնաբաժինը 1926–2015 թթ. ընթացքում նկատելի փոփոխություններ չի կրել, ապա 1926 թ.-ի համեմատությամբ շրջանի մասնաբաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ ավելացել է տոկոսային ավելի քան 20 կետով (աղյ. 4):

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թվի համեմատաբար կայունացումից հետո (1970 թ-ից հետո) շրջանում տեղի ունեցած արմատական փոփոխությունը մեծ գյուղերի մասնաբաժնի ավելացումն է՝ և՛ գյուղերի թվով և՛ գերակշռող մարդաքանակով:

Ներկայումս Արարատյան տարածաշրջանն ունի խիստ ընդգծված մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցում: Սրանց բաժին է ընկնում գյուղերի ընդհանուր թվի 65 և գյուղական բնակչության 90,6%-ը (աղյ. 4): Վերջինս ՀՀ համապատասխան ցուցանիշից բարձր է 5,5 կետով:

Արարատյան շրջանում դեռևս 1926 թ.-ից գյուղական բնակավայրերի և բնակչության կենտրոնացվածությամբ հստակորեն առանձնանում էր

800–1000 *մ* բարձրության գոտին: Չնայած այն զբաղեցնում է շրջանի մակերեսի 19,3%-ը, սակայն 1926 թ. բարձրության այդ գոտուն բաժին էր ընկնում գյուղական բնակչության և գյուղերի թվի 40%-ը: Ընդ որում, 1926 թ. դրությամբ 800–1000 *մ* բարձրության գոտուն բաժին էր ընկնում ՀՀ գյուղական բնակչության 17,8 և գյուղական բնակավայրերի քանակի 18,7%-ը: Ներկայումս այդ գոտուն բաժին է ընկնում Արարատյան շրջանի գյուղական բնակչության 60%-ից ավելին (աղյ. 5):

Աղյուսակ 4

Արարատյան շրջանի գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը ըստ մարդաշատության խմբերի (1926–2015 թթ.) [5]

Տարեթիվ	Գյուղերի ընդհ. թիվը	Գյուղական բնակչության ընդհ. թիվը (հազ. մարդ)	Գյուղական բնակավայրերի բաշխումն ըստ մարդաքանակի (մարդ)											
			մինչև 200		201–500		501–1000		1001–3000		3001–5000		5001-ից ավելի	
			Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %
1926	465	243,8	148	13616 (5,6)	150	48220 (19,8)	104	73575 (30,2)	61	100333 (41,1)	2	8045 (3,3)	–	–
1979	339	462,0	12	1538 (0,3)	62	22934 (5,0)	87	62224 (13,5)	150	262740 (56,9)	23	81956 (17,7)	5	30558 (6,6)
1995	354[1]	627,8	10	1144 (0,2)	42	14368 (2,3)	83	58839 (9,4)	164	307737 (49,0)	41	153336 (24,4)	14	92338 (14,7)
2011	365[2]	670,0	23	2775 (0,4)	35	11304 (1,8)	69	48466 (7,2)	175	326468 (48,7)	45	165991 (24,8)	18	114503 (17,1)

Ծանոթություն՝ մշտական բնակչություն չունեցող գյուղեր [1] – 2; [2] – 4:

Աղյուսակ 5

Արարատյան շրջանի գյուղական բնակավայրերի և բնակչության բաշխման փոփոխություններն ըստ բարձրության գոտիների (1926–2015 թթ.) [5]

Տարեթիվ	Գյուղական բնակչության և բնակավայրերի բաշխումը ըստ բարձրության գոտիների, *մ*													
	800–1000		1000–1200		1200–1400		1400–1600		1600–1800		1800–2000		2000-ից բարձր	
	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %	Գյուղ. թիվը	Բնակչ-ն, %
1926	188	97453 (40,0)	28	16098 (6,6)	28	16593 (6,8)	51	26494 (10,9)	61	33458 (13,7)	66	32459 (13,3)	43	21230 (8,7)
1979	166	283400 (61,3)	19	35619 (7,7)	24	43751 (9,5)	32	32452 (7,0)	35	29934 (6,5)	36	21264 (4,6)	27	15576 (3,4)
1995	178	384771 (61,3)	20	51868 (8,3)	24	66871 (10,6)	34	45856 (7,3)	36	35181 (5,6)	37	26151 (4,2)	27	17064 (2,7)
2011	174	403870 (60,3)	27	65361 (9,8)	25	64340 (9,6)	38	52031 (7,8)	35	36017 (5,4)	35	27306 (4,1)	31	20582 (3,1)

Արարատյան շրջանի տարածքի հիմնական մասը ՀՀ-ի գյուղական տարածքների շրջանացման սխեմայում համապատասխանում է Արարատյան

հարթավայրի և այն եզրավորող նախալեռնային գոտու համատարած տարաբնակեցման շրջանին, որտեղ առանձնացվում են համատարած-շթայաձև, համատարած հոծ, հարթավայրային տարածքների օջախային-ցրված և սարահարթաբլրային գրեթե համատարած տարաբնակեցման տեղական կամ համալիրային տիպերը:

Բնատնտեսական շրջանի գյուղական բնակավայրերում վերջին երկու տասնամյակի ընթացքում առաջացել են սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հիմնախնդիրներ, որոնց հիմնական պատճառը Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի գրեթե բոլոր գյուղերում նախկինի համեմատությամբ գյուղատնտեսության արտադրատնտեսական բազայի թուլացումն է (մշակովի հողատարածքների կրճատումը, բերքատվության նվազումը, գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի ոչ բավարար քանակը, ոռոգման խնդիրը, խոտհարքերի և արոտավայրերի արդյունավետության նվազումը, գյուղմթերքների իրացման խնդիրը, անասնապահության մթերատվության նվազումը, սոցիալ-մշակութային ծառայությունների ոչ բավարար մակարդակը և այլն): Մյուս պատճառը Արարատի հարյուրավոր գյուղերի և Երևանի, տարածաշրջանային կենտրոնների և քաղաքային այլ բնակավայրերի միջև նախկինում ձևավորված արտադրատնտեսական սերտ կապերի թուլացումն է, երբեմն նաև վերացումը (շատ գյուղերում խորհրդային տարիներին գործում էին արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր, որոնք ձևավորում էին արտադրատնտեսական սերտ կապեր Արարատի քաղաքների, մասնավորապես՝ Երևանի և հարյուրավոր գյուղերի միջև):

ՀՀ մնացած մարզերի և տարածաշրջանների նման Արարատյան շրջանում ներկայումս գրեթե բոլոր գյուղական բնակավայրերում առկա բնակչության թիվը զգալիորեն պակաս է մշտական բնակչության թվից, որը պայմանավորված է դրանցում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներով և բնակչության ժամանակավոր կամ մշտական արտագաղթով: Այդ երևույթն առավել նկատելի է շրջանի 1600 *մ*-ից բարձր տարածքներում ընկած գյուղերում, որտեղ գյուղական բնակչության մասնաբաժինը 1926 թ. 35,7%-ից նվազել է ավելի քան 23 տոկոսային կետով (աղյ. 5):

Բերված վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ.

1) Արարատյան բնատնտեսական շրջանը ՀՀ-ում առանձնանում է գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար առավել նպաստավոր և նպաստավոր բնատնտեսական, աշխարհագրական, պատմաաշխարհագրական և ենթակառուցվածքային պայմաններով: Այստեղ առանձնանում են երեք ենթաշրջաններ, որոնք միմյանցից տարբերվում են գյուղական տարածքների և տարաբնակեցման բնորոշ գծերով: Դրա հետ մեկտեղ շրջանի մեջ մտնող մարզերը և տարածաշրջանները միմյանց հետ ունենալով տնտեսական սերտ կապեր և ենթակառուցվածքային տարրերի որոշակի ընդհանրություն առաջացնում են գյուղական տարածքների և տարաբնակեցման միասնական ցանց:

2) Անցած տասնամյակների ընթացքում գյուղական բնակավայրերի քանակական և որակական փոփոխությունների պատճառով շրջանն այժմ ունի մեծ, խոշոր և գերխոշոր գյուղային տարաբնակեցում: Շրջանում գյուղական բնակչության և բնակավայրերի կենտրոնացվածությամբ առանձնանում է 800–1000 *մ* բարձրության գոտին, որի բաժինը բնատնտեսական շրջանի գյուղական բնակչության 60% և մեջ վերջին մոտ 90 տարվա ընթացքում այն աճել է ավելի քան 20 տոկոսային կետով:

3) Արարատյան բնատնտեսական շրջանի գյուղական բնակավայրերի զարգացման արտադրատնտեսական բազայի թուլացման, իսկ առանձին դեպքերում նաև վերացման պատճառով վերջին երկու տասնամյակում դրանցում առաջացել են սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ և տարածաշրջանային նպատակային քաղաքականություն:

Ստացվել է՝ 10.12.2015

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Географический энциклопедический словарь. Понятия и термины. М.: Советская энциклопедия, 1998, сс. 259, 274.
2. **Валесян Л.А.** Производственно-территориальный комплекс Арм. ССР. Ер.: Айастан, 1970, 375 с.
3. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով: Վիճակագրական ժողովածու, 2015: info@armstat.am
4. **Պոտոսյան Ա.Հ.** ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Եր., 2013, 416 էջ:
5. Населенные пункты и население Арм. ССР за 1831–1959 гг. Статистический сборник. Ер.: Арм. Гос. Изд., 1962, 133 с.

А. А. ПОДОСЯН

ГЕОГРАФИЧЕСКИЙ АНАЛИЗ СЕЛЬСКИХ ТЕРРИТОРИЙ АРАРАТСКОГО ПРИРОДНО-ХОЗЯЙСТВЕННОГО РАЙОНА

Резюме

В статье проанализировано развитие сельских территорий Араратского природно-хозяйственного района, в частности предпосылки формирования и расселения сельских поселений. Обсуждаются вопросы территориальных различий и особенностей сельских территорий. Приведена динамика численности населения и числа поселений района за 1926–2015 гг. Указаны актуальные социально-экономические проблемы сельских территорий района.

A. H. POTOSYAN

GEOGRAPHICAL ANALYSIS OF RURAL TERRITORIES OF ARARAT NATURAL ECONOMIC REGION

Summary

In the current article the analysis of prerequisites for forming and developing of rural territories of Ararat natural economic region of Armenia is presented, particularly concerning rural settlements and distribution of population. Issues concerning territorial differences and peculiarities of rural territories are discussed. Dynamics of population and settlements count in the region is presented for 1926–2015. Actual socioeconomic problems of rural territories of the region are highlighted.